

ԺՈՂՈՎՐԴԱՄԵՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐՏԱՑՈՒՈՒՄՆԵՐԸ
ԱՌԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՆՐՈՒՄ

Ինչպես հայտնի է, լեզուն, հանդիսանալով գրականության նախա-
լեմենսն և ազգային մշակույթի էթնոտարբերակիչ խորհրդանիշ, բնութա-
գրում է իրենով գրված ստեղծագործության ազգային պատկանելությունը:
Գեղարվեստական գրականությունն իր հերթին սերտորեն առնչվում է
ժողովրդի տնտեսական, քաղաքական, հասարակական և հոգևոր կյանքի
հետ: Ազգային ինքնությունը դառնում է գրական ստեղծագործության
օրգանական հատկանիշ, քանի որ, մարդկանց ազգային առանձնահատ-
կություններից բխող բնավորության գծերը ոչ միայն հանդիսանում են
գրական ներշնչանքի աղբյուր, այլ նաև մեկնաբանվում են տվյալ ազգի
ոգով շնչող գրողի տեսանկյունից: Այդ պատճառով տարբեր բնույթի գե-
ղարվեստական տեքստերը, այդ թվում նաև առակները, հանդես են գալիս
իբրև ազգամշակութային տեղեկատվության փոխանցման և պահպանման
իդեալական միջոցներ:

Գեղարվեստական տեքստում ազգային առանձնահատկության ար-
տացոլման խնդրի մասին խոսելիս հարկ է հիշատակել Պրիվատվայի
տեսակետը, ըստ որի տեքստի ամբողջական հատվածն ի սկզբանե
օժտված է ազգամշակութային առանձնահատկությամբ, ինչը ձեռք է բեր-
վում բաղկացուցիչ տարրերից բխող հատկանիշներից [9, c. 268]: Դրանից
բացի, շատ հետազոտողներ (Ռուբակին 1929, Կոն 1968, Լոտման 1970,
Բարտ 1978, Լեոնտև 1979) համարում են, որ տեքստը, համարվելով
պատմական որոշակի շրջանի արգասիք և սոցիալ-մշակութային ավան-
դույթների վառ արտացոլում, իրենից ներկայացնում է բարդ ֆենոմեն, որն
առանձնահատուկ ձևով արտահայտում է իրականության որոշակի
հատված, ամրագրելով լեզվամտածողության ազգային առանձնահատկու-
թյունները և այս կամ այն ժողովրդի ներկայացուցչի խոսքի <<վարքը>>:

Նկատի ունենալով, որ հաղորդակցությունը երկկողմ գործընթաց է,
այսինքն ներառում է <<հղող>>՝ հեղինակ, և <<հասցեատեր>>՝ ստացող,
հարկ է հաշվի առնել ընթերցողին, որն ընդունում է իրեն ուղղված
տեքստը: Տեքստի ընկալումը շատ գիտնականների կողմից դիտվում է իբրև
հոգեբանական պրոցես, որի էությունը կայանում է ընթերցողի մոտ
տեքստի բովանդակության կերպարի առաջացման մեջ: Իսկ վերջինս միշտ
փոփոխական է [10, c. 21]: Այսպիսով, Ռուբակինը պնդում էր, որ տեքստի

մտովի ընկալումը և գնահատականը որոշվում են <<ուսսայի, միջավայրի, պահի>> գործոններով [11, c. 75]: Ընդ որում, հատուկ կարևորություն է տալիս ընթերցողի փորձառությանը: Ըստ Բինսյի, տեքստի ընկալումը պայմանավորված է երկու գործոնների փոխազդեցությամբ 1) տեքստի իմաստաբանական ուղղվածություն և իմաստային կառուցվածք և 2) ընկալող անհատի հիշողությունը և մակարդակը ներառյալ լեզվի զարգացածության աստիճանը և նկարագրվածի վերաբերյալ գիտելիքների պաշարը [1, c. 67]: Մի խումբ հետազոտողներ երկրորդ գործոնը համարում են անհատական ճանաչողական տարածություն [5, c. 139], <<ինչը համարվում է ազգաբնորոշ և ցայտուն առանձնահատկություն, քանի որ նրա հիմքում ընկած է այն հասարակության ազգալեզվամշակութային ճանաչողականությունը, որը հոգեհարազատ է տվյալ ճանաչողական տարածությունը կրողների համար>> [6, c. 46].

Ինչպես ըստ Բրիլլանյի, Վոլսկու և այլոց մոտ, այնպես էլ սույն հոդվածում, ճանաչողական բազա ասելիս հասկանում ենք <<գիտելիքների որոշակիորեն կազմավորված ամբողջականություն համալրված ազգային առանձնահատկություններով և մշակութային պատկերացումներով, որն անհրաժեշտ է և պարտադիր տվյալ հասարակության ներկայացուցչի համար>> [13, c. 11]: Ճանաչողական բազայի նշանակությունը և նրա ուսումնասիրման անհրաժեշտությունը սահմանում են այսպես կոչված <<կոորդինատային համակարգ>>, որի միջոցով ընկալվում և համապատասխան գնահատական են ստանում նորաստեղծ տեքստերը [5, c. 141]:

Ազգային ուրույն ձևը, որն արտացոլվում է գեղարվեստական տեքստում, նաև նրանում է, որ տեքստի հստակածը կառուցվում է ժողովրդալեզվամշակութային այն միջավայրի լույս մշակութալեզվաբանական պարամետրերին համապատասխան, որին պատկանում է հեղինակը:

Ցանկացած լեզվամշակութային հասարակություն մեկնաբանում է գեղարվեստական ստեղծագործությունը իր իսկ ստեղծած նշանագիտական և արքսիոլոգիական համակարգի կոորդինատների հիման վրա: Ընդ որում, տեղի է ունենում ոչ միայն լեզվային, այլ նաև արժեքային հարմարվողություն տեքստի նյութի հետ [9, c. 262]:

Այսպիսով, ստերեոտիպ առակները, որոնք զրված են լեզենդար Եզոպոսի կողմից, երբեք չեն հնանում և մշտապես ենթարկվում են տարբեր վարիացիաների: Միայն թե, նույնիսկ այն դեպքում, երբ խոսքը գնում է հունական անփոփոխ տեքստով առակների մասին, ամեն անգամ այլ լեզուներով թարգմանելիս թարգմանչի ճանաչողական բազան թողնում է իր ազդեցությունը, կարծես թարգմանության ժամանակ առակների տեքստերը <<անցնում են>> իր միջով և նոր միայն ստանում սևփական

մայրենիի տեսքը դրանով ձևափոխվելով և նոր ազգամշակութային արժեքներ ձեռք բերելով: Դա հաստատում է նաև Պրիվալովան հետևյալ տողերում. <<Ցանկացած տեքստի վերագրումը այսպես կոչված <<միջազգային ֆոնդին>> չի երաշխավորում <<ինվարիանտ>> առակների ընկալումը տարբեր ժողովրդալեզվամշակութային ներկայացուցիչների մոտ: Ազգամշակութային առանձնահատկությունը սահմանում է այս կամ այն տեքստի ընկալման ալգորիթմը, այսպիսով նպաստելով տարբեր <<ինվարիանտների>> ընկալմանը [9, c. 256]:

Այլ խոսքով, ազգային լեզվով թարգմանված առակները միավորում են միևնույն ժողովրդալեզվամշակութային խմբի ներկայացուցիչներին միաժամանակ առանձնացնելով մյուսներից[3, c. 127]: Բացի դրանից, առակի մյուս առանձնահատկությունը, որն անհրաժեշտ է նկատի ունենալ թարգմանության ժամանակ, նրանում է, որ այն կարելի է դիտել իբրև <<լայն իրավիճակահամատեքստային միջավայր, որն առկա է, ստեղծվում կամ ենթադրվում է հեղինակի կողմից, որը ցանկանում է առավել ընդգծել տվյալ առակում նկարագրված էյնույթը դրանով այն առավել հասանելի դարձնելով իր ժողովրդին[8, c. 267]: Բայց որպեսզի առավել մեծ ազդեցություն ունենա ընթերցողի կամ ունկնդրի վրա, առակագիրները ստիպված են լինում տեքստն ավելի ընկալելի և մատչելի դարձնել: Այդ պատճառով ազգային առանձնահատկությունը առակի մի լեզվից մյուսը թարգմանելու ժամանակ այն է, որ ամեն անգամ այլ մշակույթի պատկանող առակի տեքստն ընկալելիս առակագիրները մեկնաբանել և արդյունքում ձևափոխել են դրանք համադրելով սեփական մշակույթի տարրերի հետ, որոնցով պայմանավորված են եղել նրանց աշխարհընկալումը, և որն ուղղորդել է նրանց ստեղծագործական գործունեությունը և առակների բովանդակությունը: Օրինակ Լաֆոնտենի «Душнростъ» առակի թարգմանության ժամանակ «un roiletel pour vous est un pesant fardeau...» տողը Կոլլովը և Դիմիտրև թարգմանել են «королёкдлявастяжкаяноша...», որտեղ «королёк»-ը մարմնավորում է փոքրիկ թռչուն, իսկ ռուս առակագիրների մոտ դարձել է «воробьем»:

Сказал он, – воробей, и тот тебе гяжел (Крылов)

Я чаю, для тебя тяжел и воробей (Дмитриев)

Նման փոփոխությունը լրիվ տեղին է: Ռուսական մշակույթի մեջ այդ թռչունը համարվում է ժողովրդագրական հարաբերական <<փոքրություն>>, քանի որ չի մտնում ռուս ֆոլկլորային հերոսների շարքի մեջ, և ռուսախոս մշակույթի ներկայացուցիչներից բչերը զաղափար ունեն գոնե նրա արտաքին տեսքի մասին: Դրա փոխարեն ֆրանսիական մշակույթի մեջ այդ նույն թռչունն զբաղեցնում է բավականին կարևոր տեղ: Նրա հետ

են կապված բազում հավատալիքներ, իսկ նրա որսի սովորույթը տարածված է եղել մինչև XIX դարի առաջին կեսերը:

Հարկ ենք համարում նշել նաև, որ մի շարք թարգմանիչներ, թարգմանելով Լաֆոնտենի, Գոթլովի, Թաունսենդի և այլոց առակները, հետագայում իրենք էլ իրենց հերթին նոր առակներ ստեղծագործեցին ռուսական, անգլիական և ֆրանսիական մշակույթում: Գուդկովը նշում է կապը արդեն թարգմանված և ավելի ուշ ստեղծագործված առակների միջև: <<Նախորդ տեքստերի բովանդակությունն արտացոլում և ձևավորում է լեզվամշակութային հասարակության ուղղորդման ամբողջական մասշտաբները: Այդ տեքստերի ուսումնասիրության հիման վրա կարելի է դատողություններ անել այն արարքների, գործողությունների, բնավորության գծերի և այլնի մասին, որ տիրում է սովյալ հասարակության մեջ [4, Շ. 226]: Հաշվի առնելով մեծ ժամանակագրական շառավղով տարբեր առակների նյութերը, որոնք մանրակրկիտ ուսումնասիրության են ենթարկվել («Ворона и лисица», «Волк и ягненок», «Волк и журавль», «Дуб и трость», «Лягушки, просящие царя»), նկատում ենք մի ապշեցուցիչ երևույթ. միասնական մտորումների օրինաչափություն ներկայացված լեզվամտածողական համալիրի կողմից: XVII–XX դարերից եկող ուսումնասիրված առակներում առկա են տարրեր, որոնք պատկանում են տարբեր ժամանակագրական շրջաններին, տարբեր մշակույթների. օրինակ թագավոր, արքա, ազնվական, վաճառական, հողագործ և այլն:

Դրանից բացի կա կարծիք նաև այն մասին, որ <<Էթե մտածելակերպը ծագում է անցյալի տեքստերից, ապա նոր տեքստը նրա անուղղակի հետքն է և նրանց միջև կա աննշան տարաձայնություն: Իր մեջ արտացոլելով ստեղծագործ մտածելակերպ, տեքստն իվիճակի չէ արտահայտվելու ողջ խորությամբ, բազմաշերտությամբ, կենդանի գիտակցության փոփոխականությամբ և հակասություններով: Այն առավել մաքուր է ու համակարգված, այդ պատճառով գրավոր աղբյուրը ոչ միայն բանալին է պատմական մտածելակերպի, այլ նաև նրա վարագույրը: Դրան հակառակ, կարելի է պնդել, որ էթնոմշակութային մտքերը կամ մշակութային հիմնական հակադրությունները, որոնք վերաբերում են նախնադարյան պատկերացումներին, կարող են իհայտ գալ գեղարվեստական գրականության էջերում զգալի երկարժամանակ: Այս տեսակետին է հակված նաև Լուրիեն, ըստ որի մշակույթի կենտրոնական գոտին աձևավորվում է էթնոգենեզի վաղ շրջաններում և մնում է անփոփոխ էթնոսի ողջ կյանքի ընթացքում: Նրանով է որոշվում յուրաքանչյուր կոնկրետ մշակույթի էթնիկական առանձնահատկությունը և անկրկնելիությունը: Դա այն սոցիալական հասարակությունն է, որին բնորոշ է մշակույթի առանձնա-

հասուկ երանգներ, որոնք պայմանավորում են մարդու ակտիվության բնույթը, նորը գործում է հասուկ օրենսդրության համաձայն, որի նպատակն է եզակի պահել յուրաքանչյուր հասարակության համար մշակույթի երանգները տվյալ հասարակության ներսում երկար տարիներ շարունակ, ներառյալ սոցիալական խոշոր փոփոխությունների էտապները:

Միաժամանակ նշենք նաև, որ նախորդ ողջ գրականության և ֆուլկլորի ոչ բոլոր, այսպես կոչված, ֆենոմեններն են արժանանում կիրառական լեզու մուտք գործելու բախտին: Առակների կիրառումը արդի սոցիալիզմի տարբեր ոլորտներում դրա պահանջարկի ցուցանիշն է ուսումնասիրված բոլոր մշակույթներում: Դրանից հետևում է, որ տվյալ առակները համապատասխանում են ժամանակակից հասարակության պահանջներին, իրենց մեջ որոշակիորեն արտահայտելով դրանց առանձնահատկությունները:

Չնայած առակագրության տիպիկ ձևերը ավանդական հերոսների և իրավիճակների հետ կազմում են առակագրության նշանակագրական լեզուն և որոշիչ դեր ունեն թարգմանության ժամանակ, յուրաքանչյուր հեղինակ, գիտակցաբար կամ ոչ, լրացնում է առակագրական տիպիկ ձևը նոր բովանդակությամբ, որը հաղորդում է ազգային, սոցիալական, քաղաքական և պատմական ուրույն առանձնահատկություններ:

Այսպիսով, առակների տեքստերը կարող են հանդես գալ նաև պատկերազարդ տեքստով, տարբեր մշակույթների ինքնության համեմատության, լեզվի ազգամշակութային առանձնահատկությունները արծարծելու համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. Биева, Е. Г. К вопросу о факторах, определяющих понимание текста [Текст] / Е. Г. Биева // Уровни текста и методы его лингвистического анализа. М., 1982. С. 67–78.
2. Введение в литературоведение [Текст] / под. ред. Г. Н. Поспелова. М.: Высшая школа, 1976. – 422 с.
3. Гудков, Д. Б. Русское культурное пространство и межкультурная коммуникация [Текст] / Д. Б. Гудков, В. В. Красных // Научные доклады филологического факультета МГУ. – Вып. 2. М., 1998. С. 124–133.
4. Гудков, Д. Б. Теория и практика межкультурной коммуникации [Текст] / Д. Б. Гудков. М.: Гнозис, 2003. 288 с.
5. Красных, В. В. «Свой» среди «чужих»: миф или реальность? [Текст] / В. В. Красных. М.: ИТДК «Гнозис».
6. Красных, В. В. Виртуальная реальность или реальная виртуальность [Текст] / В. В. Красных. М.: Диалог МГУ, 1998. 352 с.
7. Лурье, С. В. Историческая этнология [Текст] / С. В. Лурье. М.: Аспект-пресс, 1998. 445 с.
8. Николаева, Т. М. Типология интонации и аспектное выделение [Текст] / Т. М. Николаева // Экспериментально-фонетический анализ речи: проблемы и методы. Л., 1989. С. 113–122.

9. Привалова, И. В. Интеркультура и вербальный знак (лингвокогнитивные основы межкультурной коммуникации) [Текст] / И. В. Привалова. М. : Гнозис, 2005. 472 с.
10. Психолингвистическая и лингвистическая природа текста и особенности его восприятия [Текст] / ред. Ю. А. Жлуктенко, А. А. Леонтьев. Киев, 1979. С. 18–26.
11. Рубакин, Н. А. Психология читателя и книги. Краткое введение в библиологическую психологию [Текст] / Н. А. Рубакин. М., Л. : Госуд. изд-во, 1929. 308 с.
12. Чужое: опыты преодоления. Очерки из истории культуры Средиземноморья [Текст] М., 1999. – 327 с.
13. Русское культурное пространство: Лингвокультурологический словарь: Вып. 1 [Текст] / И. С. Брилева, Н. П. Вольская, Д. Б. Гудков, И. В. Захаренко, В. В. Красных. М. : Гнозис, 2004. 318 с.
14. Theodore Savory : The Art of Translation
15. Geoffrey N. Leech & Michael H. Short: Style In Fiction

The reflection of ethnic –cultural characteristic features in fables

This paper is about the reflection of ethnic –cultural characteristic features in fables. Language as a symbol of the culture of that nation characterizes the national approaches to different economic, political, social and other aspects of life.

The fable as well as other forms of literary works are tools that transmit traditions, concepts, and other characteristic features of a nation.

In this paper we have tried to present different scientific approaches. Special attention is paid to the methods of translation of customs, idioms inherent in that language. The aim is to better understand and preserve the culture of that ethnic group, and transmit it to the target language.